ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն –249 *09 մարտի 2009թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

52

Հ.Հ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ
Մտից թիվ 02-3174
«12» 03 1909

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

09 մարտի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ոսկի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի քննարկման համար գլխադասային նշանակել Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովը:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

N - 19

« 6 » մարտ 2009 թ.

375095, Երևան, Մ.Բաղրամյանի պող. 19
Հեռ. 588-242
Էլ. փոստ vdallaqyan@parliament.am

ՀՀ ԱԺ նախագահ
պրն. Հ. Աբրահամյանին

Մեծարգո նախագահ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75 և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47 հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Ոսկի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը:

Խնդրում եմ օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Կից ներկայացվում է նաև՝

ա/ օրենքների ընդունման հիմնավորումը,

բ/ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ տեղեկանք,

գ/ օրենքների փոփոխվող հոդվածների վերաբերյալ տեղեկանք:

Հարգանքներով՝

Վ. Դալլաքյան
/030/

Մուտք N 79-49
«09» 03 2009թ.

Պ-558 - 09.03.2009-ԳԲ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Որսի և որսորդական տնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ 110507 օրենքի /այսուհետ՝ օրենք/ 5-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
«2. որսի կենդանիների ցանկը հաստատում և դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝
«2/ լիազորված պետական մարմինը /այսուհետ՝ լիազորված մարմին/»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ ենթակետով՝
«10/ որսի կենդանիների ցանկի հաստատումը, դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակների և որսի ժամկետների սահմանումը»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝
«8/ որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացումը»:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «4/» ենթակետով՝
«4/ որսորդական ուղեգիրը»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «4», «5», «6», «7», «8» և «9» ենթակետերով՝
«4/ որսի օբյեկտ չհամարվող կենդանիների ցանկը;
5/ որսի արգելված միջոցները և գործիքները.
6/ որսի արգելված տարածքների ցանկը.
7/ զնված որսի արգասիքի փաստաթղթերի ձևակերպման կարգը,

8/ օգտագործման հանձնված որսորդական տնտեսությունների և որսահանդակների ցանկը,
9/ որսորդների և որսի օգտատերերի պարտականությունները»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի վերջին տողում «թաքստոցները» բառից հետո լրացնել «և թիվ 5-ից ոչ խոշոր թակարդները, որոնց օգտագործման կարգը սահմանում է լիազորված մարմինը» բառերով:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ վերնագրով և բովանդակությամբ 21.1 հոդվածով՝
«Հոդված 21.1. Որսի արգելված ձևերը և միջոցները
Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է՝
1/ որսի համար օրենքով չնախատեսված զենքի, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով չգրանցված որսորդական զենքի կիրառումը,
2/ ռազմական ակոսավոր զենքի օգտագործումը,
3/ ինքնաձիգերի, աղեղների, ինքնաձիգ հրացանների, օդամղիչ զենքի, ծուղակների /փոսերի/ և թիվ 5-ից խոշոր թակարդների օգտագործումը,
4/ քիմիական և պայթուցիկ նյութերի կիրառումով վայրի կենդանիների որսը՝ բացառությամբ հոտավետ խայծերի,
5/ լուսարձակների կամ լուսային այլ հզոր աղբյուրների կիրառումով որսը,
6/ տրանսպորտային կամ մեխանիկական միջոցների /այդ թվում ուղղաթիռով կամ ինքնաթիռով/ կիրառումով որսը,
7/ ձվերի և ձագերի հավաքը, գազանների և թռչունների բների ու որջերի քանդելը,
8/ կենդանիների ապրելավայրերի և հավաքատեղերի վնասումը և ոչնչացումը,
9/ բնական աղետներից, այդ թվում և սովից փրկվող կենդանիների որսը
10/ էլեկտրոնային ձայն վերարտադրող սարքերի և ձայնարձակիչների կիրառումը,
11/ ցանցերի, օղակների կիրառումը,
12/ առանց թույլտվության վայրի գազաններին և թռչուններին անազատ պայմաններում պահելը,
13/ կենդանիներին ծխի միջոցով որսալը,
14/ էլեկտրական հոսանքի կիրառումով որսը»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ վերնագրով և բովանդակությամբ 28.1 հոդվածով՝
«Հոդված 28.1. Որսորդական ուղեգիրը

Որսորդական ուղեգիրը տրվում է որսորդին լիազորված մարմնի կամ օգտատիրոջ կողմից և իրավունք է տալիս որսալ որոշակի տեսակների որսի կենդանիներ՝ համաձայն ուղեգրում նշված այցելության ժամկետների, որսահանդակների, որսատեսակների և յուրաքանչյուր որսատեսակի քանակի»:

Հոդված 10. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Պ-558[1] - 09.03.2009-ԳԲ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2003թ. ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի /այսուհետ՝ օրենսգիրք/ 294-րդ հոդվածում՝

ա/ 1-ին կետի 4/ -րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝
«4/ կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ չորսից վեց ամիս ժամկետով:»»:

բ/ 2-րդ կետի 2/-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝
«2/ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է որսագողության դեմ ուղղված պայքարն առավելագույնս արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրենքի ընդունման կապակցությամբ այլ օրենքներ ընդունելու կամ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2007 թվականի ապրիլի 9-ին

ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ՀՈԴՎԱԾ 5. ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍԻ ՌԵՍՈՒՐՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

1. Որսի եւ որսի ռեսուրսի օգտագործման օբյեկտներ են համարվում որսի կենդանիները եւ որսահանդակների հետ մեկտեղ նաեւ դրանց օգտագործման իրավունքները:

2. Որսի կենդանիների ցանկը հաստատում եւ դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին): Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների որսի տարեկան թույլատրելի չափաքանակը չպետք է գերազանցի Բնության պահպանության միջազգային միության սահմանած նորմերը /IUCN/:

3. Որսահանդակները կարող են գտնվել անտառային եւ գյուղատնտեսական նշանակության հողերի, ինչպես նաեւ ջրային տարածքների վրա:

4. Որսի կենդանիների օգտագործման իրավունքները տարանջատվում են դրանց բնակավայրերի եւ կեցության վայրերի (հող, ջուր, օդ, անտառ) օգտագործման իրավունքներից:

ՀՈԴՎԱԾ 6. ՈՐՍԻ ԵՎ ՈՐՍԻ ՌԵՍՈՒՐՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Որսի եւ որսի ռեսուրսի օգտագործման փոխհարաբերությունների մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
2) լիազորված մարմինը.
3) պետական կառավարման տարածքային մարմինները.
4) տեղական ինքնակառավարման մարմինները.
5) ֆիզիկական եւ իրավաբանական անձինք.
6) Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիները:

ՀՈԴՎԱԾ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որսի կենդանիների եւ որսահանդակների պահպանության, պաշտպանության եւ կայուն օգտագործման, որսի եւ որսորդական տնտեսության վարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) որսի կենդանիների եւ որսահանդակների պահպանության, պաշտպանության ու կայուն օգտագործման, որսի եւ որսորդական տնտեսության վարման բնագավառներում պետական քաղաքականության իրականացումը.

2) որսահանդակների ցանկի հաստատումը.

3) ոլորտին առնչվող պետական ծրագրերի հաստատումը.

4) անազատ եւ կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներին պահելու եւ օգտագործելու կարգի սահմանումը.

5) որսի կենդանիների պետական կադաստրի եւ մոնիթորինգի վարման կարգերի սահմանումը.

6) որսորդական տնտեսության ստեղծման հանձնաժողովի աշխատակարգի սահմանումը եւ կազմի հաստատումը.

7) որսորդական տնտեսության ստեղծումը.

8) որսորդական տնտեսությունների համար հողամասի նկատմամբ վարձակալության վճարների սահմանումը.

9) որսորդական մինիմումի կարգի սահմանումը.

10) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 8. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որսի կենդանիների եւ որսահանդակների պահպանության, պաշտպանության եւ կայուն օգտագործման, որսի եւ որսորդական տնտեսության վարման բնագավառում լիազորված մարմնի իրավասություններն են՝

1) ոլորտի քաղաքականության եւ ռազմավարության մշակումը.

2) պետական ծրագրերի մշակումը եւ իր լիազորության սահմաններում դրանց իրականացումը.

3) որսի կենդանիների եւ որսահանդակների պահպանության, պաշտպանության եւ կայուն օգտագործման, որսի եւ որսորդական տնտեսության վարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

4) որսի կանոնների հաստատումը.

5) որսորդական վկայականի միասնական ձեւի հաստատումը.

6) որսորդական մինիմումի քննության կազմակերպումը եւ անցկացումը.

7) որսորդական վկայականի տրամադրումը.

8) որսի կենդանիների ցանկի հաստատումը, դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակների եւ որսի ժամկետների սահմանումը.

9) որսի թույլտվությունների եւ պայմանագրերի օրինակելի ձեւերի մշակումն ու հաստատումը.

10) որսի կենդանիների, այդ թվում՝ որսի հատուկ թույլտվություն պահանջող կենդանիների օգտագործման թույլտվությունների տրամադրումը եւ պայմանագրերի կնքումը.

11) որսի ընթացքում ձեռք բերված կամ օրինական ճանապարհով գնված արգասիքները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու թույլտվությունների տրամադրումը.

12) որսի կենդանիների պետական կադաստրի վարումը.

13) որսի կենդանիների պետական հաշվառման կազմակերպումը եւ իրականացումը.

14) որսի կենդանիների պետական մոնիթորինգի կազմակերպումն ու վարումը.

15) որսորդական տնտեսություն ստեղծելու մրցույթի անցկացումը.

16) որսի ռեսուրսի օգտագործման պայմանագրի կնքումը եւ որսորդական տնտեսություն վարելու իրավունքի տրամադրումը.

17) որսորդական տնտեսության վարման եւ զարգացման ծրագրերի հաստատումը.

18) օրենքով սահմանված կարգով որսորդների կամ որսի օգտատերերի հետ կնքված թույլտվություններն ու պայմանագրերը լուծելը.

19) որսորդական տնտեսության վարման մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալը.

20) իր իրավասության սահմաններում միջազգային համագործակցության իրականացումը.

21) պետական անտառներում եւ անտառային ֆոնդի հողերում սույն հոդվածի 2-րդ եւ 20-րդ կետերով սահմանված իրավասությունները դրանց կառավարումն իրականացնող պետական կառավարման մարմնին զիջելը.

22) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 19. ՈՐՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Որս կատարելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1) որսորդական զենք կրելու վկայականը.

2) կենդանիների որսի թույլտվությունը.

3) որսորդական վկայականը:

ՀՈԴՎԱԾ 20. ՈՐՍԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Որսի կանոնները հաստատվում են սույն օրենքով սահմանված կարգով եւ ներառում են՝

1) որսի ժամկետները եւ միջոցները.

2) որսի օբյեկտ համարվող կենդանիների ցանկը.

3) կենդանիների որսի սահմանային թույլատրելի չափաքանակները:

ՀՈԴՎԱԾ 21. ՈՐՍԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվում է սիրողական (անհատական եւ կոլեկտիվ) որս: Որսի ընթացքում կարող են օգտագործվել օրենքով սահմանված կարգով որսորդական ողորկափող եւ ակոսավոր հրազեն, որսորդական սառը զենք: Սույն օրենքով որպես թույլատրված որսամիջոցներ են համարվում որսորդական շները, որսկան թռչունները, խայծերը, խրտվիլակները, թաքստոցները եւ թակարդները:

ՀՈԴՎԱԾ 28. ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որսի կենդանիների օգտագործման համար տրվում են հետեւյալ թույլտվությունները.

1) երկարաժամկետ թույլտվություն՝ լիազորված մարմնի կողմից տրվում է օգտատիրոջը մինչեւ 50 տարի ժամկետով՝ որսորդական տնտեսության օգտագործման պայմանագրի հիման վրա եւ օգտատիրոջը թույլ է տալիս օգտագործել տարածքի որսորդական կենդանիները՝ համաձայն թույլտվության մեջ սահմանված տեսակների, քանակների եւ ժամկետների.

2) կարճաժամկետ թույլտվություն՝ լիազորված մարմնի կամ օգտատիրոջ կողմից տրվում է որսորդին որսի հատուկ թույլտվություն չպահանջող կենդանիների տեսակների որսի համար՝ կոնկրետ վայրում եւ ժամանակահատվածում.

3) անվանական թույլտվություն՝ լիազորված մարմնի կամ օգտատիրոջ կողմից տրվում է որսորդին՝ լիազորված մարմնի հետ համաձայնեցնելով կենդանու տեսակի որսի համար հատուկ թույլտվությունը՝ կոնկրետ վայրում եւ ժամանակահատվածում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

(Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին)

ՀՈԴՎԱԾ 294. ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍԸ

1. Ապօրինի որսը, որը՝

1) պատճառել է խոշոր վնաս,

2) կատարվել է մեխանիկական տրանսպորտային միջոցի կամ օդանավի, պայթուցիկ նյութերի, գազերի օգտագործմամբ կամ թռչունների եւ գազանների զանգվածային վնասման այլ եղանակներով,

3) կատարվել է այնպիսի թռչունների եւ վայրի կենդանիների նկատմամբ, որոնց որսն ամբողջովին արգելված է,

4) կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: